

ԱՄՓՈԹ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՅԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄԱՍ II. ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՅԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՈԱՉՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՅԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԸ

I. ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՅԻ ԱՌԱՋԱՐԿԸ: ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՐԾԻՋՆԵՐԸ			
Միջոցառումները	Կատարող / Զամակատարողը	Ժամկետը	Կատարման արդյունք/ընթացք
I. ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՅԻ ԱՌԱՋԱՐԿԸ: ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՐԾԻՋՆԵՐԸ			
1. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՆԵՐԻ ՇՈՒԿԱ			
1.1. Պետական պարտատոմսերի շուկայի բարելավում			
1.1.1. Պետական պարտատոմսերի թողարկումների քանակի նվազեցում՝ զուգահեռաբար ծավալների ավելացմամբ:	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	2021թ. հունիս 30	Կետն իրականացվել է: Պետական զանապետական պարտատոմսերի համախմբման և տեղաբաշխման աճուրդների ժամանակացույցի վերանայման արդյունքում զգալիորեն նվազել են ինչպես շրջանառության մեջ առկա թողարկումների (ըստ առանձին ԱՄՏԾ-ների) քանակը, այնպես էլ տեղաբաշխման աճուրդների քանակը:
1.1.2. Ուսումնասիրել 6 ամիս մարման ժամկետ ունեցող պարտատոմսերի ծավալների ավելացման և դրանց՝ որպես ուղենիշային սահմանման հնարավորությունները:	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	2020թ. դեկտեմբեր 31	Կետն իրականացվել է: ՀՀ ֆինանսների նախարարությունը շարունակում է 52 շաբաթ և 39 շաբաթ ժամկետով ՊԿԴ-ների տեղաբաշխումների իրականացման կայուն վարքագիծը՝ առկա հնարավորությունների սահմաններում ուղենիշային ծավալ ձևավորելու և 6 ամիս մարման ժամկետ ունեցող պարտատոմսերն ուղենիշային սահմանելու նպատակով:
1.1.3. Պետական պարտատոմսերի շուկայում ներդրողների հետ հարաբերությունների գործառույթի զարգացում՝ - Մեկ պատուհանի տեսքով տեղեկատվության ներկայացում, մասնավորապես՝ դրան նվիրված առանձին ինտերնետային կայքում առնվազն եռամսյակային կտրվածքով թարմ և ամբողջական տեղեկատվության (մակրոտնտեսական, պետական պարտատոմսերի աճուրդներ, շուկայի ծավալներ, կարգավորումներ, ուղեցույցներ և այլն) հրապարակում (հայերեն և անգլերեն լեզուներով)՝ հաշվի առնելով խոշոր ինստիտուցիոնալ ներդրողների պահանջները, - ներդրողներին ուղղված ակտիվ միջոցառումների (պարբերական roadshow-ներ, շնորհանդեսներ) իրականացում:	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	Տեղեկատվության հրապարակման համար առանձին կայքի ստեղծման մասով՝ 2022թ. դեկտեմբերի 31 Պարբերաբար (առնվազն տարեկան մեկ անգամ)	Ներդրողների հետ հարաբերությունները կրում են պարբերական բնույթ: Շարունակվում են հանդիպումները զանապետական պարտատոմսերի շուկայի գործակալների (առաջնային դիլերների) հետ առնվազն ամենամսյա և ոչ գործակալ ինստիտուցիոնալ մասնակիցների հետ եռամսյակային պարբերականությամբ հանդիպումները: Իրականացվում են ներդրողներին ուղղված ոչ գործարքային իրազեկման արշավներ: Միջոցառմամբ նախատեսվող՝ հրապարակման ենթակա տեղեկություններն արդեն իսկ առկա են ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում: Նոր կայքի ստեղծման առաջնահերթության բավարար հիմքեր դեռևս առկա չեն:
1.1.4. Վերլուծել ներդրումային (այդ թվում՝ առաջնային դիլերների) և բանկային ծառայությունների առավել խիստ գործառնական տարանջատման առավելությունները և թերությունները, առաջարկել տարանջատման իրականացման համար անհրաժեշտ մեխանիզմներ:	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	2021թ. դեկտեմբեր 30	Հարցն իրավական տեսանկյունից կարգավորված է շահերի բախումների կարգավորումներով: Շուկայում առաջացող խնդիրների՝ շահերի բախումների կարգավորումներով չլուծվելու դեպքում խնդրի լուծման լրացուցիչ մեխանիզմներ կներդրվեն:
1.1.5. Առաջնային դիլերների հետ կնքվող համաձայնագրի վերանայում՝ առաջնային և երկրորդային շուկաներում մասնակիցների իրավունքներն ու պարտավորությունները հավասարակշռելու և լրացուցիչ խթաններ նախատեսելու համար:	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	2021թ. հունիսի 30	Կետն իրականացվել է: 2020 թվականի հոկտեմբերի 30-ին Հայաստանի ֆոնդային բորսայի կողմից հաստատվեց «Լրժեթթյոթերի շուկա ստեղծողի կանոնները»՝ միավորելով նախկինում գործող «Շուկա ստեղծողի կանոնները» և «Պետական պարտատոմսերի գործակալների գնանշումների կանոնները»: Նշված փաստաթղթով վերանայվեցին առաջնային դիլերների կողմից շուկա ստեղծողի գործառույթի իրականացման կանոնները: 2024 թվականի դեկտեմբերի 11-ին Հայաստանի ֆոնդային բորսայի կողմից գրանցվեց թիվ ՀՖԲ-01/119Լ Լրժեթթյոթերի շուկայի ստեղծողի կանոնները (Նոր խմբագրությամբ), որը նախատեսում է շուկա ստեղծողի կողմից երկուդման գնանշման պարտավորության մեղմացում:
1.1.6. Ուսումնասիրել սփյուռքի պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը՝ ուսումնասիրության արդյունքներով ներկայացնել սփյուռքի պարտատոմսերի տեղաբաշխման նպատակով ֆինանսական գործիքի մշակման և կիրառման վերաբերյալ առաջարկություն:	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ	2022 թ. մարտի 31	Կետն իրականացվել է: Ուսումնասիրությունն իրականացվել է: Կատարելագործվել է զանապետական պահառու համակարգի Նոր հարթակը, ինչի շնորհիվ պետական պարտատոմսերում ներդրում կատարելու հնարավորություն ընձեռնվեց նաև ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (այդ թվում՝ սփյուռքում բնակվող մեր հայրենակիցներին):
2. ԴՐԱՄԱԿԱՆ ՇՈՒԿԱ: ՌԵՊՈ ՇՈՒԿԱ			
2.1. Դրամական շուկայի զարգացում: Ռեպո շուկայի խորացում			

2.1.1. Դրամի գնի բացահայտման համար դրամական շուկայի ուղենշային դրույքի մշակում:	Դրամական շուկայի աշխատանքային խումբ (մասնակիցներն են ֆինանսական շուկայի մասնակիցները, ՀՀ կենտրոնական բանկը և ՎՉԵԲ-ը)	2021թ. մարտ 31	Շարունակաբար իրականացվում է, մասնավորապես՝ 1. Կենտրոնական բանկի կողմից ձևավորվել է AMX-ի, EBRD-ի և ֆինանսական շուկայի մասնակիցների մասնակցությամբ դրամական շուկայի զարգացման աշխատանքային խումբ: Խումբը պարբերաբար հանդիպում է դրամական շուկայի զարգացման խնդիրները վերհանելու, դրանց լուծումների մշակման և իրագործման նպատակով: 2. Նշված աշխատանքային խմբի աշխատանքի արդյունքում 2023թ. մարտի 31-ին AMX-ի կողմից ներդրվել է կենտրոնացված մեկօրյա ռեպո հարթակ: Սա կարևոր է ինչպես դրամական շուկայի տարր հանդիսացող ռեպո շուկայի խորացման, այնպես էլ փաստացի (մեկօրյա) ռեպո գործարքների հիման վրա դրամական շուկայի մեկօրյա ուղենշային դրույքի դուրսբերման համար: 3. Խմբի կողմից իրականացված վերլուծությունների և քննարկումների արդյունքում եզրահանգումն այն է, որ ուղենշային դրույքը նպատակահարմար է հաշվարկել այն դեպքում, երբ կլինեն բավարար քանակով և ծավալով (նախնական գնահատականով՝ առնվազն 20 մլրդ ՀՀ դրամ) մեկօրյա ռեպո գործարքներ այս շուկայում:
2.1.2. Աշխատանքներ ռեպո շուկայի խորացման, այդ թվում՝ ֆինանսական շուկայի մասնակիցների հետ զրբալ գլխավոր ռեպո համաձայնագրերի (ICMA Global Master Repurchase Agreements) ներդրման ուղղությամբ, որը հնարավորություն կտա ստանդարտացնել ռեպո գործառնությունների պայմանագրերը:	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	2021թ. հունիս 30	Շարունակաբար իրականացվում է, մասնավորապես՝ 1. 2022 թվականին Կենտրոնական բանկը համագործակցել է Կապիտալի շուկայի միջազգային ասոցիացիայի (ICMA) հետ, որի արդյունքում ոչ ռեզիդենտ ներդրողների համար «ճանաչելի» և ստանդարտ պայմաններ ունեցող ստանդարտ ռեպո պայմանագրի՝ Գլոբալ ռեպո գլխավոր համաձայնագրի (GMRA) ՀՀ իրավական համակարգում կիրառելիության վերաբերյալ ICMA-ի կողմից իրավական եզրակացություն է հրապարակվել: Այս իրավական եզրակացությունը հավաստում է, որ օտարերկրյա գործընկերները տեղական գործընկերների հետ կարող են GMRA պայմանագրի հիման վրա առանց իրավական խոչընդոտների կցել ռեպո գործարքներ, ինչը ռեպո գործարքների ծավալները մեծացնող կարևոր գործոն է: 2. Կենտրոնական բանկի, AMX-ի, EBRD-ի և ֆինանսական շուկայի մասնակիցների հետ համատեղ աշխատանքի արդյունքում ռեպո շուկայի խորացման համար 2023թ. մարտի 31-ին AMX-ի կողմից ներդրվել է կենտրոնացված օրական ռեպո առևտրային հարթակը: 3. 2024թ. հունվարից սկսած Վերակառուցման և շարգացման Եվրոպական Բանկի (EBRD) և International Swaps and Derivatives Association (ISDA)-ի հետ համագործակցությամբ աշխատում ենք ISDA-ի կողմից մշակված ֆինանսական գործարքները կարգավորող զրբալ ստանդարտ պայմանագրի՝ ISDA SFT Schedule Provisions-ի ներդրման ուղղությամբ: ISDA SFT Schedule Provisions-ը ունիվերսալ պայմանագիր է և կարող է հիմք հանդիսանալ թե՛ ածանցյալ, թե՛ ռեպո, թե՛ արժեթղթերի փոխառությունների տրամադրման (securities lending) գործարքները կարգավորելու համար: ISDA SFT Schedule Provisions-ի վերջնական ներդրումն ակնկալում ենք 2025թ վերջին:
	ՀՀ ֆինանսների նախարարություն		
2.1.3. ՀՀ կառավարության հաշիվներում կանխիկ հոսքերի կանխատեսման և իրացվելիության միջնաժամկետ կանխատեսման գործառնությունների արդյունավետության բարձրացում:	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	2021թ. դեկտեմբերի 31	Կետն իրականացվել է: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացվում ՀՀ պետական բյուջեի և գանձապետական միասնական հաշվի այլ ենթահաշիվների կանխիկ հոսքերի եռամսյակային, ամսական, շաբաթական և օրական կանխատեսումներ: ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի սերտ համագործակցության արդյունքում շարունակաբար աշխատանքներ են տարվում կանխիկ հոսքերի կանխատեսման և իրացվելիության կանխատեսումների արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

3. ՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՑՈՄՆԵՐԻ ԵՎ ԲԱԺՆԵՑՈՄՆԵՐԻ ՇՈՒԿԱ

3.1. Պետություն-մասնավոր գործընկերության և պետական մասնակցությամբ ներդրումային ֆոնդերի շրջանակներում թողարկումներ			
3.1.1. - Ենթակառուցվածքային ներդրումային նախագծերի (այդ թվում՝ քաղաքային տրանսպորտային համակարգի վերակառուցում, ջրային ռեսուրսների կառավարում, Էներգետիկա և այլն) ֆինանսավորում կապիտալի շուկայի գործիքների միջոցով, որը կարող է ներառել ինչպես ենթակառուցվածքային ներդրումային ֆոնդերի ձևավորումը, այնպես էլ տարբեր աղբյուրներից ստացված ֆինանսավորումը ենթակառուցվածքային պարտատոմսերի թողարկումների հետ զուգակցելը: - Վերլուծել պետական մասնակցությամբ մասնագիտացված ներդրումային ֆոնդի ստեղծման նպատակահարմարությունը, և ըստ	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	Շարունակական, մինչև 2022թ. հուլիսի 31 առնվազն մեկ նախագծի ֆինանսավորման իրականացում	1. Իրականացվել է վերլուծություն Պետական մասնակցությամբ ենթակառուցվածքային ֆոնդի ստեղծման նպատակահարմարության վերաբերյալ: Վերլուծության արդյունքներով այս փուլում ռիսկային է գնահատվում ՊՄԵՖ ստեղծում: ՀՀ-ում ՊՄԵՖ ստեղծման համար առանձնացվել են հետևյալ նախապայմանները 1.1 ՊՄԵՖ ֆոնդի քաղաքական անկախության, թափանցիկության և հաշվետվողականության ապահովում, 1.2 ներդրումային ծրագրերի վերհանման, պատրաստման, կառավարման և մոնիթորինգի կարողությունների զարգացում, 1.3 հանրային ներդրումային ծրագրերի բանկի ստեղծում, 1.4 ֆիսկալ ռիսկերի գնահատման և կառավարման կարողությունների առկայություն՝ միջազգային գործընկերների համար (պոտենցիալ ներդրողների) բավարար չափանիշներին համապատասխան: 1.5 պետական մասնակցությամբ ընկերություններում կորպորատիվ կառավարման մշակույթի ներդրում՝ միջազգային գործընկերների համար (պոտենցիալ ներդրողների) բավարար չափանիշներին համապատասխան: ՊՄԵՖ ստեղծման հարցին նախատեսվում է անդրադառնալ պետության սեփականության քաղաքականության հաստատումից և ՊՄԵ-ների համար Կորպորատիվ կառավարման կանոնակարգի սզկունքների կիրառությունն ապահովող մեխանիզմների ներդրումից հետո: 2. Պետությունը 2021 թվականից մասնակցում է Ամբեր կապիտալ ընկերության կողմից կառավարող ԵՄ Հայաստան ՓՄԶ
	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն		
	ՀՀ ֆինանսների նախարարություն		

այլոմ, մշակել հայեցակարգ:	ՀՀ կենտրոնական բանկ		Ֆոնդին: 2024 թվականի հունվարի 18-ին Կառավարության թիվ 93-Լ որոշմամբ հաստատվել է Ներդրումային ֆոնդերում Ներդրումներ կատարելու մասին ծրագիրը, որի շրջանակում նախատեսվում է պետության մասնակցությունը տնտեսության գերակա ոլորտներում (արդյունաբերություն, էներգետիկա և գյուղատնտեսություն) Ներդրումներ իրականացնող ֆոնդերում՝ մինչև 3 մլրդ ՀՀ դրամի չափով:
3.1.2. Ենթակառուցվածքային ընկերությունների գործունեությունը կարգավորող դաշտում կապիտալի շուկա մուտքի օրենսդրական խոչընդոտների վերացում:	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	2021թ. մարտի 31	Կետն իրականացվել է: 2021 թվականի դեկտեմբերի 1-ից ուժի մեջ մտած «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-368-Ն օրենքով փոփոխվել է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածը, սահմանելով, որ ցանցի լիցենզիա կամ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն մատուցելու նպատակով ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն ստացած անձի 25 և ավելի տոկոս բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) նկատմամբ իրավունքի օտարում, այլ կերպ փոխանցում, գիշում կամ գրավադրում, ինչպես նաև այդ անձի գործունեությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կանխորոշելու հնարավորություն տվող բաժնեմասի (բաժնետոմսի, փայի)՝ անկախ քանակից, օտարում, այլ կերպ փոխանցում, գիշում կամ գրավադրում կարող է իրականացվել միայն Կարգավորողի համաձայնությունը կարգավորվող անձի կողմից ստանալուց հետո: Օրենքի Նշյալ կարգավորումների հիմքով Հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 9-ի N56Լ որոշմամբ սահմանվել է նաև Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում կարգավորվող անձանց նկատմամբ հսկողության փոխանցումը համաձայնեցնելու կարգը:
	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)		
3.2. Համայնքային պարտատոմսերի թողարկումներ			
3.2.1. Խոշոր համայնքների (մասնավորապես՝ Երևան քաղաքի) կողմից պարտատոմսերի շուկայի միջոցով ֆինանսավորման իրականացում: Պարտատոմսերի միջոցով երկարատև ֆինանսավորումը կարող է ուղղվել ենթակառուցվածքային զարգացման նախագծերի ֆինանսավորմանը: Այդ թվում, ուսումնասիրել հնարավոր թողարկումների համար երաշխիքների և այլ գործիքների ներգրավման հետ կապված ծախսերը և օգուտները Երևանի և այլ խոշոր համայնքների համար:	ՀՀ ֆինանսների նախարարություն	Շարունակական, մինչև 2022թ. դեկտեմբերի 31 առնվազն մեկ թողարկման իրականացում	Ներկայում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ընտրվելու են ՀՀ-ում հարկաբյուջետային ապակենտրոնացման հայեցակարգային մոտեցումները, որոնց շրջանակներում կդիտարկվեն նաև համայնքների կողմից պարտատոմսերի թողարկման նպատակահարմարությունը: Երևանի քաղաքապետարանը Տեղական պարտատոմսերի թողարկման հնարավորությունների ձևավորման(ընդլայնման) և ենթակառուցվածքային ծրագրեր ֆինանսավորելու համար ֆինանսական գործիքների բազմազանեցման և ֆինանսական ինքնուրունության ամրապնդման նպատակով շրջանառության մեջ է դրել «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում և հարակից մի շարք օրենքներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքների նախագծերը: Նշյալ օրենսդրական փոփոխությունների իրագործման դեպքում առավել նպաստակա հարմար կլինի նախաձեռնել նշված գործընթացի իրականացումը:
	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն		
	Երևանի քաղաքապետարան		
	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)		
3.2.2. Չարգացած համայնքներում ֆինանսական հաշվառման և հաշվետվողական համակարգի ներդրման մեխանիզմների մշակում:	ՀՀ ֆինանսների նախարարություն	2023թ. հունիսի 30	ՀՀ քաղաքային և գյուղական բոլոր համայնքների համար պարտադիր է Օրենքի համաձայն հաշվապահական հաշվառման վարումը և ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը: Միջոցառման իրականացման մեխանիզմները ՀՀ ֆինանսների նախարարության կողմից արդեն իսկ մշակված են: Անհրաժեշտ է ապահովել օրենքի պահանջների համաձայն հաշվապահական հաշվառման նոր համակարգին փաստացի անցում կատարելու և հաշվապահական հաշվառման նոր համակարգին դեռևս անցում չկատարած համայնքների նկատմամբ ՏԿԵՆ կողմից լրացուցիչ ծնակ կիրառելու հանգամանքները:
	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն		
3.3. Պետական կազմակերպությունների թողարկումներ			
3.3.1. Աճի պոտենցիալ ունեցող պետական մասնակցությամբ մի քանի ընկերությունների կամ դրանց բաժնետոմսերի առնվազն մի մասի մասնավորեցում ֆոնդային բորսայում հրապարակային առաջարկի միջոցով:	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	Շարունակական, մինչև 2023թ. հունիսի 30 առնվազն երկու ընկերության բաժնետոմսերի վաճառք ֆոնդային բորսայում	Ֆինանսական և ներդրումային գնահատականներով ներկայումս պետական մասնակցությամբ ընկերություններն ընդհանուր առմամբ չունեն բավարար ֆինանսական կայունություն և ներդրումային գրավչություն՝ հրապարակային առաջարկի միջոցով մասնավորեցման համար: Չնայած մի քանի ընկերությունների մասով ընտրվումներ են իրականացվել, գնահատվել է, որ դրանց հրապարակային առաջարկը նպատակահարմար չէ՝ հաշվի առնելով շուկայի պահանջները և ընկերությունների ներկայիս դիրքավորումը: Այնուամենայնիվ Պետական գույքի կառավարման ոլորտի բարեփոխումների ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի շրջանակներում Կառավարությունն իրականացնում է առանձին ընկերությունների ներդրումային գրավչության բարձրացմանն ուղղված աշխատանքներ՝ հետագայում այդ ընկերությունների՝ ցուցական միջոցով մասնավորեցման նպատակով:
	ՀՀ ֆինանսների նախարարություն		
	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն		
	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)		
3.4. Մասնավոր հատվածի կողմից թողարկումներ			

3.4.1. Խոշոր ընկերությունների կողմից կապիտալի շուկայի միջոցով ներդրումների ներգրավման աջակցություն, այդ թվում՝ - ընկերությունների հետ հաղորդակցություն, միջազգային վարկանշային կազմակերպությունների կողմից վարկանշմանը աջակցություն, - այդ ընկերություններում հանրության կողմից ներդրման հնարավորությունների ստեղծում, ներառյալ՝ կենսաթոշակային ֆոնդերի կողմից այդ ընկերություններում բաժնեմասի ձեռքբերում, ընկերությունների բաժնետոմսերի մի մասի հրապարակային առաջարկ հանրությանը:	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	Շարունակական; մինչև 2022թ. հունիս 30 առնվազն երկու ընկերության վարկանշում: Մինչև 2023թ. դեկտեմբերի 31 միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից ֆինանսավորում ստացած երկու խոշոր ընկերության կողմից պարտատոմսերի թողարկում	Կետը իրականացվել է: 2023 թվականի հուլիսի 6-ին Կառավարության թիվ 1125-Լ որոշմամբ հաստատվել է «Թողարկման և վարկանիշավորման պետական աջակցության ծրագիր»-ը: Ծրագրի շրջանակում պետությունը օժիանդակություն է տրամադրում պարտատոմս/բաժնետոմս թողարկած/միջազգային վարկանիշ ստացած ընկերություններին: Ծրագրի շրջանակներում արդեն իսկ աջակցություն է տրամադրվել դրամային պարտատոմս թողարկած 3 ընկերությունների: Եվս 5 ընկերություններ սկսել են պարտատոմսի թողարկման գործընթաց: Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից ֆինանսավորում ստացած խոշոր ընկերությունները իրականացրել են պարտատոմսերի թողարկում՝ առանց պետական աջակցության ծրագրի:
	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	
	ՀՀ Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)		
3.4.2. Standard&Poor's-ի սուվերեն վարկանիշի ստացում:	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	2021թ. հունիսի 30	Կետը իրականացվել է: 2021 թվականի հունիսի 28-ին ՀՀ ֆինանսների նախարարության և «Standard&Poors» վարկանիշային գործակալության միջև կնքվել է ծառայություններից օգտվելու մասին պայմանագիրը, որի հիման վրա 2021 թվականի հոկտեմբերին վերջինս առաջին անգամ վարկանշել է Հայաստանի կառավարությանը: 2024 թվականի օգոստոսին վարկանիշային կազմակերպությունը Հայաստանին շնորհել է «BB-/B» վարկանիշ՝ դրական հեռանկարով:
3.4.3. Կերյուծել աուդիտի եզրակացություն ունեցող կամ կառավարման բարձր որակով ընկերություններին տրամադրվող վարկերի մասով պահուստավորման ավելի մեղմ պահանջների սահմանման նպատակահարմարությունը:	ՀՀ Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	2021թ. մարտի 31	Ներկայումս Կենտրոնական բանկի կողմից միջոցներ են ձեռնարկվում բարձրացնել միջազգային վարկանիշային կազմակերպությունների կողմից վարկանշման դերը թե՛ արժեթղթերի թողարկման և թե՛ վարկավորման ընթացքում առաջացող ռիսկերի գնահատման գործընթացներում: Մինևոյն ժամանակ նախնական քննարկումներ են ընթանում միջազգային վարկանիշային կազմակերպությունների կողմից տրվող վարկանիշներից բացի ԵՄ հավատարմագրում ունեցող այլ վարկանիշային կազմակերպություններից վարկանիշների ստացման դեպքում ՀՀ առևտրային կազմակերպությունների համար խթաններ ստեղծելու ուղղությամբ: Տվյալ քաղաքականությունն անուղղակիորեն հանգեցնելու է նաև աուդիտի ոլորտի զարգացմանը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարկանիշային կազմակերպությունները գնահատման ժամանակ պահանջում են աուդիտի առկայությունը: Կերը նշված ուղղությունն առավել նպատակահարմար է սույն միջոցառման ներքո բարձրացված խնդրի լուծման համար:
	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն		
	ՀՀ ֆինանսների նախարարություն		
3.4.4. Մշակել մեխանիզմներ, որոնցով բանկերը վարկային փաթեթները կգնահատեն ընկերության կողմից ՀՀ ՊԵԿ ներկայացված տվյալներից ելալես չտարբերվող ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:	ՀՀ Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	2022թ. հունիսի 30	Բանկերն իրենք պետք է գնահատեն իրենց ռիսկերը՝ հաշվի առնելով ու գիտակցելով նաև, որ ԿԲ-ի կողմից կարող են դասակարգման կամ լրացուցիչ պահուստ ձևավորելու պահանջներ լինել, եթե բանկերը անարժանահավատ ֆինանսական հաշվետվություններ հիմք ընդունեն:
	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն		
	ՀՀ Պետական եկամուտների Կոմիտե		
3.4.5. Կորպորատիվ կառավարման կանոնադրի պարտադիր նորմերի կիրառության ինստիտուցիոնալ մեխանիզմների սահմանում:	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	2021թ. դեկտեմբեր 30	2024թ. մայիսի 22-ին ԱԺ կողմից ընդունվել է «Քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով սահմանվել է Կորպորատիվ կառավարման կանոնադրի (ԿԿԿ) հասկացությունը և դրա ընդունման իրավական հիմքերը: Ընդհանուր կանոնի համաձայն՝ Կանոնադրին միանալը կամավոր է, եթե օրենքով այլ բան սահմանված չէ: 2024թ. հուլիսի 30-ին Էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատվել է Նոր Կորպորատիվ կառավարման կանոնագիրը, որը մշակվել է 2023թ. վերանայված G20/S2ՀԿ կորպորատիվ կառավարման սկզբունքների հիման վրա: Ներկայումս Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվում է Կորպորատիվ կառավարման կանոնադրի կիրական մեխանիզմներ սահմանող հայեցակարգ, որն, ի թիվս այլևի, անդրադարձ կկատարի այնպիսի խնդիրների, ինչպիսիք են կանոնադրի համապատասխանության նկատմամբ հսկողություն իրականացնող համապատասխան մարմնի և ընթացակարգերի սահմանումը և կարողությունների ձևավորումը, առանձին ոլորտների ընկերությունների համար Կանոնադրի որոշ սկզբունքների պարտադիրությունը:
	ՀՀ Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)		

3.4.6.Որոշակի խմբերի դասվող կազմակերպությունների համար մշակել կորպորատիվ կառավարման ներդրման պետական աջակցության ծրագիր:	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	2022թ մարտի 31	Կետև իրականացվել է: 2023 թվականի հուլիսի 6-ին Կառավարության թիվ 1125-Լ որոշմամբ հաստատվել է «Թողարկման և վարկանիշավորման պետական աջակցության ծրագիր»-ը, որի շրջանակներում ցուցակված ընկերություններն, ի թիվս այլնի, դրամական աջակցություն են ստանում՝ նաև կորպորատիվ կառավարման համակարգերի ներդրմանն ուղղված ծախսերի համար: Բացի այդ, Էկոնոմիկայի նախարարությունը ԿՀԵԲ-ի հետ համատեղ 2025թ իրականացնելու է կապիտալի շուկայի աջակցման ծրագիր, որի շրջանակներում շահառու ընկերություններն, ի թիվս այլնի, կստանան աջակցություն նաև կորպորատիվ կառավարման համակարգերի ներդրման հարցում:
3.5. Ֆինանսական հատվածի կողմից թողարկումներ			
3.5.1.Ապահովված հիպոտեկային պարտատուների, հիպոտեկային վարկերով ապահովված արժեթղթերի ապահովման միջոցների գրանցման ավտոմատ համակարգի ներդրում:	ՀՀ կադաստրի պետական կոմիտե	2021 դեկտեմբերի 31	2023 թվականի ապրիլի 13-ին ընդունվել է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-145-Ն ՀՀ օրենքը, որի 1-ին հոդվածով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել է նոր խմբագրությամբ, որի համաձայն՝ եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման համար անհրաժեշտ իրավահաստատող փաստաթղթերը, ինչպես նաև հողը Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված՝ քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով չփոխանցվող հողերի ցանկում լինելու կամ չլինելու մասին տեղեկանքը, հողի և շինության նպատակային կամ գործառնական նշանակությունը (գյուղատնտեսական հողերի դեպքում՝ հողատեսքը) սահմանելու կամ փոփոխելու վերաբերյալ որոշումները անշարժ գույքի պետական ռեգիստր ներկայացնում են, իսկ պետական գրանցման համար անհրաժեշտ այլ փաստաթղթերը կարող են ներկայացնել դրանք կազմած, հաստատած կամ վավերացրած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները, Նոտարները: Միաժամանակ նույն հոդվածը լրացվել է 2.1-ին մասով, որի համաձայն՝ եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա սույն հոդվածի 2-րդ մասում նշված մարմինները և Նոտարները սույն հոդվածի 2-րդ մասում նշված պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնում են Էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային փաստաթղթերին ներկայացվող պահանջները և ներկայացման կարգը սահմանում է Կառավարությունը: 2024 թվականի փետրվարի 23-ին ընդունվել է ՀՀ կառավարության «Էլեկտրոնային փաստաթղթերին ներկայացվող պահանջները, սահմանափակում կիրառելու կամ սահմանափակումը վերացնելու վերաբերյալ որոշումներն անշարժ գույքի պետական ռեգիստր ներկայացման կարգը սահմանելու մասին» N 243-Ն որոշումը, որի հիմքով ներդրվել է Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման Էլեկտրոնային համակարգը, և սահմանափակում կիրառելու կամ դադարեցնելու լիազորություն ունեցող մարմինները (բազառությամբ դատարանների) ներկայումս սահմանափակումները Կադաստրի կոմիտե են ներկայացնում Էլեկտրոնային եղանակով:
	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)		
3.5.2.Ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկումների խրախուսում, այդ թվում՝ միջազգային վարկանիշի ստացմանն աջակցություն:	ՀՀ ֆինանսների նախարարություն	2022 հունիս 30	Ապահովված են միջազգային վարկանիշի ստացման նախադրյալները:Ներկայումս ՀՀ-ն սուվերեն վարկանիշ է ստանում երեք խոշոր վարկանիշային գործակալությունների կողմից (Moody’s, Fitch և Standart & Poors): Այնուամենայնիվ Ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկումների համար անհրաժեշտ նախապայման է նաև. 3. 5.1 կետով սահմանված ապահովման միջոցների գրանցման ավտոմատ համակարգի ներդրումը:
	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)		
4. ԱՇՏԱՆՑՑԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՋՆԵՐԻ ՇՈՒԿԱ			
4.1. Ածանցյալ ֆինանսական գործիքների շուկայի զարգացում			
4.1.1. Հեջավորման հնարավորությունների ընդլայնման համար ածանցյալների շուկայի զարգացման ուղղությամբ աշխատանքներ (այդ թվում՝ գրագիտության բարձրացում, հարկային հարցերի քննարկում և դրանք հիմնավորված լինելու դեպքում հնարավոր լուծումների առաջարկում և այլն):	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	Շարունակական	Շարունակական իրականացվում է: Մասնավորապես՝ 1. Ածանցյալների շուկային առնչվող հարկային խնդիրների լուծման ուղղությամբ ԿԲ-ը 2021թ. ներկայացրել է առաջարկություններ ՀՀ ֆինանսների նախարարությանը և IMF-ին, որը տեխնիկական աջակցություն է տրամադրել Ֆինանսների նախարարությանը ընդհանուր կապիտալի շուկայի, այդ թվում՝ ածանցյալների շուկայի հարկման խնդիրների ուղղությամբ: 2. 2022թ. Կենտրոնական բանկը քայլեր է ձեռնարկել իրական հատվածի կողմից արժեքային ռիսկերի հեջավորման գործիքների՝ ածանցյալ ֆինանսական գործիքների կիրառումը խթանելու ուղղությամբ: Մասնավորապես, ֆինանսական հատվածի հետ քննարկումների արդյունքում Կենտրոնական բանկի կողմից որոշակի բարեփոխումներ են իրականացվել կարգավորման դաշտում՝ հեջացնելու ածանցյալ գործիքների առաջարկի գործընթացը: Այսպես, մեղմացվել են առևտրային բանկերի՝ արժեքային ռիսկերի կառավարմանը ներկայացվող այն նորմատիվային պահանջները (ՀՀ ԿԲ խորհրդի կողմից հաստատված Կանոնակարգ 2), որոնք կարող էին դիտվել որպես ածանցյալների շուկայի զարգացման խոչընդոտ: 3. 2023թ. ածանցյալների շուկայի զարգացման նպատակով մշակվել այս շուկայի խորացման գործողությունների մանրամասն ծրագիր, որը քննարկման փուլում է Կենտրոնական բանկի ներսում: 4. 2024թ. հունվարից սկսած EBRD-ի և International Swaps and Derivatives Association (ISDA)-ի հետ համագործակցությամբ ԿԲ-ն աշխատում է ISDA-ի կողմից մշակված ածանցյալ գործարքները կարգավորող ստանդարտ պայմանագրի՝ ISDA SFT Schedule Provisions գրքալ ստանդարտ պայմանագրի ներդրման ուղղությամբ: Աշխատանքը նախատեսում ենք ավարտին հասցնել 2025թ. վերջին:
	ՀՀ ֆինանսների նախարարություն		
II. ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՅԻ ՊԱՅԱՆՁԱՐԿ			
5. ՆԵՐԴՐՈՂՆԵՐ			

5.1. Ներդրողների բազայի ընդլայնում			
5.1.1. Կապիտալի շուկայի, դրա ռիսկերի վերաբերյալ կրթական և իրազեկման աշխատանքների իրականացում (այդ թվում՝ քաղաքացիների շրջանում)՝ այս գործընթացում ներառելով ինչպես պետական մարմիններին, այնպես էլ մասնավոր հատվածին:	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	Շարունակական	Շարունակական իրականացվում է: Մասնավորապես՝ 1. 2023թ. Fininfo.am կայքում ներառվել է պարտատուների բաժին: 2. 2024թ. սեպտեմբերից դպրոցներում ուսումնասիրում են արժեթղթերի մասին տեղեկություններ հասարակագիտության 10-րդ դասարանի դասագրքի շրջանակում: Մյուս տարի կիրառարակվեն 9-րդ և 11-րդ դասարանի հասարակագիտության դասագրքերը, որոնց շրջանակում կուսումնասիրեն ֆինանսական համակարգը, այդ թվում՝ ներդրումային ընկերությունների մասին: 3. Մշակվել և հրապարակվել է մեկ տեսաօձույնով արժեթղթերում ներդրումային խարդախությունների վերաբերյալ: 2024թ. վերջ և մյուս տարվա սկիզբ կիրառարակվեն 10-ից ավելի հոլովակներ խնայողությունների, ներդրումների ու կուտակային կենսաթշակային համակարգի վերաբերյալ: 4. 2024թ. տարի սահմանամերձ 4 գյուղերում իրականացվել է ԴԴՄՍ 30-30 ծրագիրը, որի շրջանակում 124 հոգի ստացել են ֆինանսական կրթություն ու դասընթացավարների կողմից ուղեկցում ֆինանսական գործարքներում 6 ամիսների ընթացքում: Ուսումնասիրված թեմաներում ներառված է եղել նաև. ներդրումներ թեման: 5. ABC Finance-ում նոր բաժին է լրացվել «ներդրումներ» անունով, որում մանրամասն նյութ կիրառարակվի նաև արժեթղթերի շուկայի վերաբերյալ: 6. 2024 թվականի հոկտեմբերի 4-6-ը Դիջիթալ Եսպրիի շրջանակում Նախարարության Նախաձեռնությամբ Նախարարության, Կենտրոնական բանկի, կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների և ֆոնդային բորսայի բարձրաստիճան ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպվել է «Ֆինանսական գրագիտությունը որպես կապիտալի շուկայի և ներդրումների շարժիչ ուժ» խորագրով պանելային քննարկում: 7. Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական էջում բացվել է կապիտալի շուկային նվիրված առանձին բաժին: Կայքում հղում է արվել նաև ABC Finance և Fininfo կայքերին:
5.1.2. Զբաղողֆանդինգի կարգավորումների ներդրում:	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ ֆինանսների նախարարություն	2021թ. դեկտեմբերի 31	Կետն իրականացվել է: Զբաղողֆանդինգի ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերը հաստատվել են Կենտրոնական բանկի խորհրդի կողմից 08/02/2022թ:
5.1.3. Թափանցիկության բարձրացում՝ թողարկողների, արժեթղթերի, արժեթղթերով գործարքների վերաբերյալ առավել ամբողջական տեղեկատվության հրապարակման միջոցով (այդ թվում՝ միաժամանակ հայերեն և անգլերեն [եզուներով]), որը ներդրողի և այլ օգտագործողների համար կլինի ավելի հարմարավետ և օգտակար:	Հայաստանի ֆոնդային բորսա (համաձայնությամբ) ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ ֆինանսների նախարարություն	Շարունակական	Թափանցիկության բաժնացման ամենամառչելի տարբերակը շարունակում է մնալ amx.am կայքը, որը շարունակական բարելավման պրոցեսի մեջ է: Սակայն, ի լրումն կայքի բարելավման՝ ներդրել ենք տվյալների ապահովման ժամանակակից հնարավորություններ, ինչպիսին է տվյալներին՝ API-ի միջոցով հասանելիության տրամադրումը: Այսօր ՀՀ-ն երկրորդային շուկայի վերաբերյալ տեղեկատվությունը կարող է հասանելի դարձնել նաև web և mobile տեղմիջանցների միջոցով:
5.1.4. Խթանել ներդրումային ծառայությունների մատուցման շրջանակներում նոր տեխնոլոգիաների կիրառումը:	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	Շարունակական	Կետն իրականացվել է: 2023 թ ՀՀ-ի հետ համագործակցությամբ ՀՀ-ի կողմից Sponsored Market Access and Direct Market Access առևտրի մասնակցության մեխանիզմները, որոնք հիմնված են նոր տեխնոլոգիաների վրա և ապահովում են ֆիզիկական անձ մասնակիցների ուղիղ մուտքը բորսայական գործարքներին: Առևտրի մասնակցության այս նոր մեխանիզմի գործունեությանն առնչվող կանոնները ԿԲ կողմից գրանցվել են 2023թ ապրիլին:
5.1.5. Միջազգային հարթակներում երկրի ներդրումային միջավայրի ներկայացման, խթանման և ճանաչելիության բարձրացման ծրագրի մշակում:	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	2021թ. դեկտեմբեր 31	Կետն իրականացվել է: 2024թ Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել և հրապարակվել է ՀՀ ներդրումային քաղաքականության ամփոփաթեթը:
5.1.6. Աշխատել օտարերկրյա ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ ՀՀ շուկա ներգրավելու ուղղությամբ (այդ թվում՝ կարգավորումների վերանայման և երկրի խթանման միջոցառումների իրականացման միջոցով):	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ) Հայաստանի ֆոնդային բորսա (համաձայնությամբ) ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	2021թ. հոկտեմբեր 31	Շարունակական իրականացվում է: Մասնավորապես՝ 1. Կենտրոնական բանկի կողողինացմամբ կապիտալի շուկայի զարգացման ծրագրի շրջանակում 2021թ. իրականացվել է օտարերկրյա ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից ծառայությունների մատուցման միջազգային փորձի ուսումնասիրություն, մասնավորապես՝ մասնաճյուղերի միջոցով և cross-border սկզբունքով ծառայությունների մատուցման իրավական թվագրային կարգավորումները, կարգավորող և վերահսկող մարմինների միջև համագործակցության հնարավոր և արդյունավետ մեխանիզմները, ինչպես նաև օտարերկրյա պետությունների օրենսդրությունների համարժեքության գնահատման հնարավոր մեխանիզմները: Խմբի աշխատանքների դարարեցման արդյունքում աշխատանքը չի ավարտվել: 2. 2024թ. սեպտեմբերից սկսած Հայաստանի ֆոնդային բորսայի հետ քննարկումներն իրականացվում օտարերկրյա ընկերությունների կողմից բորսայի կողմից կառավարվող սեփական ապագաբանեքի և ապագաբանեքի զուգակցում:

		ՀՀ ֆինանսների նախարարություն	Ընկերությունները փողովք բորսայի փողովք կազմակերպելով պետական պաշտատուներով և այլ աղբյուրներ շուկաներում առևտրին օտարերկրյա կազմակերպությունների կողմից հեռակա մասնակցության (Remote Trading) հնարավոր տարբերակների շուրջ: 3. Հայաստանի ֆոնդային բորսայի հեռակա մասնակցությունը, որը նաև ենթադրում է կորպորատիվ շուկաներին հասանելիություն, ենթադրում է նաև ՀՀ արժեթղթերի շուկայի մասին օրենքի փոփոխություն: Մոտ ապագայում նախատեսվում է, մինչև համապատասխան օրենսդրական փոփոխությունների իրականացումը, բորսայի առանձին շուկաներին հեռակա մասնակցության հնարավորությունը կարգավորել Հայաստանի ֆոնդային բորսայի կանոններով:
III. ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՅԻ ԵՆԹԱԿԱՈՈՒՑԱԾՔ			
6. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ			
6.1. Բորսայական ենթակառուցվածքի բարելավում			
6.1.1. Բորսայական գործարքների կամ գործարքների մի մասի համար նախնական դեպոնացման մեխանիզմի վերացում, որը հնարավորություն կտա բարձրացնել արժեթղթերով գործարքների կլեմման արդյունավետությունը:	ՀՀ կենտրոնական բանկ	2021թ. դեկտեմբերի 31	Կետն իրականացվել է: 1. 2023թ. մարտի 31-ին AMX-ի կողմից կազմակերպվող մեկօրյա ռեպո հարթակի համար նախնական դեպոնացման մեխանիզմը վերացվել է՝ հաշվի առնելով, որ այս գործարքները նվազագույն ռիսկ են պարունակում (մեկօրյա են և հիմքում ընկած է պետական պարտատուները): 2. Ինչ վերաբերում է մյուս գործիքներին, ապա դրանց մասով 19. 11. 2020 թ. -ին տեղի է ունեցել աշխատանքային քննարկում կապիտալի շուկայի զարգացման ծրագրի ներքո ձևավորված աշխատանքային խմբի շրջանակներում: Քննարկման ընթացքում վերհանվել են այն հնարավոր մեխանիզմները, որոնք կարող են կիրառվել նախնական դեպոնացման մեխանիզմի վերացման դեպքում: Քննարկվել է կենտրոնական գործակալի (CCP) և երաշխիքային հիմնադրամի գործարկման տարբերակները: ԿԲ կողմից իրականացված հետազա վերլուծությունները ցույց են տվել, որ CCP-ի և երաշխիքային հիմնադրամի ներդրումն արդարացված կլինի իրականացնել շուկայում բավականաչափ ծավալով գործարքներ լինելու պարագայում: Հակառակ դեպքում այս ինստիտուտների ներդրումը նպատակահարմար չէ: 3. Միջոցառումը ներառվել է նաև Վարչակալի ֆոնդային բորսայի հետ ներկայիս համագործակցության շրջանակներում մշակված բորսայի ընդհանուր ռազմավարության ներքո և դրա իրականացումը կախված է այս ռազմավարության վերջնական հաստատումից:
	Հայաստանի ֆոնդային բորսա (համաձայնությամբ)		
	Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա (համաձայնությամբ)		
7. ԴԵՊՈԶԻՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳ			
7.1. Դեպոզիտար ենթակառուցվածքի բարելավում			
7.1.1. Կորպորատիվ պարտատուների համար Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի և Զիլիթթրիմի միջև կապի ապահովացում	Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա (համաձայնությամբ)	2022թ. հունիսի 30	Վերջին տարիներին Դեպոզիտարիայի և Զիլիթթրիմի միջև ընթացել են քննարկումներ, որոնք միտված են եղել ՀՀ կորպորատիվ արժեթղթերի հետ կապված Զիլիթթրիմի մոտ հնարավոր ռիսկերի մեղմմանը, մասնավորապես, ռիսկերը վերաբերում են հայկական թողարկողներին իրական շահառուներին և շուկայում կնքվող գործարքի կողմերին: ԵՄ, ԱՄՆ առկա պատժամիջոցները ՌԴ-ի և Իրանի Իսլամական Հանրապետության ռեզիդենտների նկատմամբ և ՀՀ աշխարհագրական և տնտեսական կապերը այս երկու երկրների հետ ստիպում են Զիլիթթրիմին գզուշավորությամբ մոտանել ՀՀ արժեթղթերին: Ներկայումս Զիլիթթրիմի ռիսկերի կոմիտեի ղեկավարի և այլ շահագրգիռ ստորաբաժանումների ղեկավարների հետ քննարկվում են վերոնշյալ ռիսկերի կառավարման մեխանիզմները
	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)		
	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն		
7.1.2.Ինտեգրել պետական և կորպորատիվ արժեթղթերի դեպոզիտարիաները:	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	2022 դեկտեմբերի 31	1. 19. 11. 2020 թվականին կայացել է կապիտալի շուկայի զարգացման ծրագրի շրջանակում ձևավորված աշխատանքային խմբի առաջին առցանց հանդիպումը: Աշխատանքային խումբը հաստատեց այն դիրքորոշումը, որ պետական պարտատուները Կենտրոնական դեպոզիտարիա տեղափոխելուն ուղղված վերլուծական աշխատանքները ժամանակին կատարվել են ամբողջ ծավալով: 2. Կենտրոնական բանկը գույքագրել է այն նախապայմանները, որոնց առկայությունն անհրաժեշտ է համարում պետական և կորպորատիվ դեպոզիտարիաների ինտեգրման դեպքում: Այս նախապայմանները ներկայացվել են Վարչակալի ֆոնդային բորսային: 3.Միջոցառումը ներառվել է նաև Վարչակալի ֆոնդային բորսայի հետ ներկայիս համագործակցության շրջանակներում մշակված բորսայի ընդհանուր ռազմավարության ներքո և դրա իրականացումը կախված է այս ռազմավարության վերջնական հաստատումից:
	ՀՀ ֆինանսների նախարարություն		
7.1.3.Ուսումնասիրել բորսայի և դեպոզիտարիայի տեխնիկական հագեցվածությունը, բացահայտել բացերը:	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	Շարունակական 2021թ. հունիսի 30	Ընկերությունների կողմից պարբերաբար իրականացվում է՝ 1. Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի կատարելագործում՝ արդյունավետության բարձրացման նպատակով: 2. Տեխնիկական համակարգերի կատարելագործում: Մասնավորապես, պարբերաբար թարմացվում են սերվերային և ցանցային համակարգերը, ինչպես նաև Ընկերությունների ծրագրային ապահովումները: 3. Առցանց ծառայությունների ֆունկցիոնալության ընդլայնում, մասնավորապես՝ ՀԿԴ Բջջային և վեբ հավելվածների (CDA online) միջոցով արժեթղթերի սեփական հաշվի առցանց բացման գործընթացի
	Հայաստանի ֆոնդային բորսա (համաձայնությամբ)		

	Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա (համաձայնությամբ)		կազմակերպման հնարավորություն(հաշվի բացման հայտի ուղարկում, հաշվի օպերատորների կողմից հայտի ստացում, հաստատում և/կամ մերժում), ինչպես նաև օտարերկրյա պահառուների կողմից հաշվառվող արժեթղթերի սեփականատերերին՝ բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցության, քվեարկության կատարման հնարավորության ապահովում: 4. Գործընթացների արագացում և թղթային աշխատանքների ծավալի կրճատում: 5. Հիմնական ենթակառուցվածքների ամրապնդում` վերը նշված բոլոր կետերի աջակցության համար:
7.1.4. Ֆինանսական շուկայի ենթակառուցվածքների CPSS-IOSCO- ի սկզբունքներին ձևավորված ենթակառուցվածքների համապատասխանության ուսումնասիրություն:	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	2021թ. հունիսի 30	Կետև իրականացվել է: ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողության և ռիսկերի վերահսկման համակարգերի՝ Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպության և Միջազգային հաշվարկների բանկի ֆինանսական շուկայի ենթակառուցվածքների սկզբունքներին համապատասխանության գնահատումն իրականացվել է, ավելին՝ ձևավորվել են վերհանված անհամապատասխանությունների շուրջ առաջարկություններ:
	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն		

IV. ԿԱԴԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

8. ԿԱԴԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ			
8.1. Օրենսդրական և կարգավորման համակարգի բարելավում			
8.1.1. Իրականացնել «Բաժնետիրական ընկերությունների մասին» և այլ հարակից օրենքների բազմակողմանի ուսումնասիրություն՝ դաշտը համապատասխանեցնելով ժամանակակից պահանջներին, մասնավորապես՝ - Վերանայել ընկերությունների բացասական սեփական կապիտալով գործունեության սահմանափակումները :- Ներդնել աշխատակիցներին բաժնեմասային օպցիոնների տրամադրման օրենսդրական կարգավորումները: - Փոխարկվող արժեթղթերի կարգավորումների վերանայում՝ միջազգային պրակտիկային դրանք համապատասխանեցնելու նպատակով: - Ուսումնասիրել սնանկության գործող կարգավորումների ազդեցությունը կապիտալի շուկայի վրա և, ըստ անհրաժեշտության, ներկայացնել առաջարկություններ:	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	2021թ. սեպտեմբերի 30	Կետև իրականացվել է: Իրականացվել է Ընկերությունների վերաբերյալ իրավական դաշտի խնդիրների վերհանում և ուն. համապարփակ ուսումնասիրություն, որի արդյունքներով ներկայումս Արդարդատության և Էկոնոմիկայի նախարարությունների կողմից Համաշխարհային բանկի աջակցությամբ մշակվում է Ընկերությունների մասին նոր օրենք: • 30. 05. 2024թ. թիվ 213-Ն օրենքով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում ներդրվել է ՍԵՅՖ ներդրումային գործիքը: •Բացասական կապիտալով ընկերության գործունեության սահմանափակումները վերհանվել են, 26. 05. 2021թ. ՀՕ-236-Ն օրենքով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում իրականացվել են փոփոխություններ: • Աշխատակիցների օպցիոնների տրամադրման գործընթացն օրենսդրորեն կարգավորվել է 26. 05. 2021թ. ՀՕ-236-Ն օրենքով, բացի այդ ինստիտուտի լավարկմանն ուղղված անդրադարձ է կատարվել Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված օպցիոն պայմանագրի համապարփակ կարգավորմանն ուղղված փաթեթով, որը ներկայումս ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: • Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել է փոխարկելի փոխառության գործիքը կարգավորող օրենսդրական փաթեթը, նախագիծը Կառավարությունն արդեն իսկ ուղարկել է Աժ: • Իրականացվել է սնանկության ոլորտի համապարփակ ուսումնասիրություն, ինչի արդյունքով ներկայումս մշակվում է նոր սնանկության օրենսգիրք:
8.1.2.Շահաբաժինների և տոկոսային եկամուտների համար եկամտային հարկի և շահութահարկի հարկման հանրագումար բեռի առկայությամբ երկարամյակետ քաղաքականության որոշում, այդ թվում՝ արդեն տրամադրված հարկային արտոնությունների գործողության ժամկետները հստակեցնելով շուկայի մասնակիցների համար:	ՀՀ ֆինանսների նախարարություն	2021թ. մարտի 31	Ներկայումս աշխատանքներ են իրականացվում ՀՀ Ազգային ժողովի կողմից 2020 թվականի հունվարի 24-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-82-Ն օրենքով սահմանված արտոնությունների գործողության ժամկետների հստակեցմանն ուղղությամբ:
	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն		
	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)		
8.1.3.Ուսումնասիրել կարգավորվող շուկայում կազմակերպությունների առանձին խմբերի (այդ թվում՝ ՓՄՁ) արժեթղթերի թույլտվության գործընթացի պարզեցման հնարավորությունները:	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	2021թ. հունիսի 30	Կազմակերպությունների առանձին խմբերի (այդ թվում՝ ՓՄՁ) արժեթղթերի թույլտվության գործընթացի պարզեցումը Նորմատիվ-իրավական բազմաշերտ և ընդգրկուն գործընթաց է, որը չի սահմանափակվում միայն Հայաստանի Ֆոնդային բորսայի կանոններով և պահանջում է համալիր մոտեցում: Հայաստանի Ֆոնդային բորսայի 2025-2027 թթ. գործարար ծրագրի մի մաս է դարձվել ՓՄՁ-ների ցուցակման հարցը, մասնավորապես, կարևորվել է այլընտրանքային ցուցակման հարթակի ստեղծումը ՓՄՁ-ների համար, որում ցուցակման գործընթացը կլինի հեշտացված,ինչն էլ նրանց հնարավորություն կտա կապիտալի շուկայի գործիքների միջոցով ներգրավել անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ իրենց գործունեության իրականացման համար: Էկոնոմիկայի նախարարությունը քննարկում է նաև կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագրի մշակման փուլում, ՓՄՁ համար պարզեցված հայտարարագիր սահմանելու հնարավորությունը:
	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)		
	Հայաստանի ֆոդդային բորսա (համաձայնությամբ)		
8.2. Վերահսկողություն բարելավում			
8.2.1. Արժեթղթերի շուկայի իրավական դաշտի՝ Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպության արժեթղթերի կարգավորման սկզբունքներին և նպատակներին համապատասխանության ուսումնասիրություն:	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	2021թ. հունիսի 30	Ընդունված պրակտիկան այն է, որ գնահատումն իրականացվում է ոչ թե ԿԲ կողմից, այլ միջազգային կազմակերպությունների կողմից: Նախատեսվում է համապարփակ ուսումնասիրությունն իրականացնել հեղթական ֆինանսական հատվածի գնահատման (FSAP) ժամանակ:
8.2.2. ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողության և ռիսկերի վերահսկման համակարգերի գնահատում՝ Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպության և Միջազգային հաշվարկների բանկի ֆինանսական շուկայի ենթակառուցվածքների սկզբունքներին համապատասխան:	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	2021թ. հունիսի 30	Կետև իրականացվել է: ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողության և ռիսկերի վերահսկման համակարգերի՝ Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպության և Միջազգային հաշվարկների բանկի ֆինանսական շուկայի ենթակառուցվածքների սկզբունքներին համապատասխանության գնահատումն իրականացվել է, ավելին՝ ձևավորվել են վերհանված անհամապատասխանությունների շուրջ առաջարկություններ: